

**ԱՄԲՈՂԶ ՅՈՒՑԻՉՈՎ ԱՍՏԻՃԱՆ
ՄԻԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԲԱԶՄԱՆԴԱՄՆԵՐ
ՌԱՑԻՈՆԱԿ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**§ 5. ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՐԱՆՑ ՀԵՏ**

**4. Նույնական ձևափոխություններ:
Նույնություններ**



Հարցեր և առաջադրանքներ

1. Ստորև բերված հավասարություններից որո՞նք են նույնություն: Պատասխանը հիմնավորել.

ա) $a(a-3) = a^2 - 3a$,

բ) $a^2b + ab^2 = ab(a+b)$,

գ) $(a-2)^2 = a^2 - 4a - 4$,

դ) $x^4 - y^4 = (x-y)(x+y)(x^2 + y^2)$,

ե) $\frac{1}{a(a+2)} = \frac{1}{a} - \frac{1}{a+2}$,

զ) $\frac{a^3 - 8}{a^2 + 2a + 4} = a - 2$,

է) $\frac{x^2y + y^2x}{x+y} = 2xy$,

ը) $(a-1)(a^3 + a^2 + a + 1) = a^4 - 1$:

2. Ապացուցել նույնությունը.

ա) $a^3 + b^3 = (a+b)^3 - 3ab(a+b)$,

բ) $\frac{x^2 - 4x + 4}{x^2 + xy - 2x - 2y} = \frac{x-2}{x+y}$: